

## Արձանագրություն 4

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝  
26.11.2020թ. կայացած նիստի

### Օրակարգ

ԿԳՄՍ նախարարության ընդունելության քննությունների առարկայացանկում առաջարկվող փոփոխության մասին:

Գիտխորհրդի կազմում ընդգրկված 36 անդամներից նիստին ներկա էին 30-ը :

### ԼՍԵՑԻՆ՝

ԿԳՄՍ նախարարության ընդունելության քննությունների առարկայացանկում առաջարկվող փոփոխությունների մասին հարցը (ըստ ԵՊՀ ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ Ա. Մարգարյանի բանավոր փոխանցման):

### ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ԵԼՀ ֆակուլտետի դեկան Բ.Գ.Թ ղոցենտ Գևորգ Բարսեղյանը ներկայացրեց առաջարկի էությունը այն մասին, թե նախընտրելի է ԵԼՀ ֆակուլտետում գործող ծրագրերի ընդունելության առարկայացանկը սահմանափակել երկու առարկայով՝ բացառելով օտար լեզվի բանավոր քննության հնարավորությունը:

Ելույթ ունեցան անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ. Գ. Պ պրոֆեսոր Սեդա Գասպարյանը, թարգմանչական տետության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ ղոցենտ Ռուզան Ղազարյանը, անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ պրոֆեսոր Մարգարիտա Ապրեայանը, անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ պրոֆեսոր Ելենա Երզնկյանը, ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ ղոցենտ Հասմիկ Բաղդասարյանը, գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ պրոֆեսոր Յուրա Գաբրիելյանը, արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ ղոցենտ Անուշ Սեդրակյանը, ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ մ.գ.թ ղոցենտ Զավեն Հարությունյանը, միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ պրոֆեսոր Շուշանիկ Պարոնյանը:

Նշվեց, որ օտար լեզուներով մասնագիտական արդյունավետ կրթություն իրականացնել՝ առանց դիմորդի՝ այս կամ այն լեզվի բանավոր կիրառության առանձնահատկությունների տարրական գիտելիքների և հմտությունների նախնական ստուգման անհնար է, քանզի դա անխուսափելի նախապայման է ապագա մասնագետի պատրաստման համար: Նշվեց նաև, որ հարկ է հաշվի առնել, որ ներկայում աշխարհում շրջանառվող թեստային ստուգման համակարգերը իրենց բոլոր դրական առանձնահատկություններով հանդերձ (ուշադրություն կենտրոնացնելու, մտքի ճկունություն զարգացնելու կարողությունների խթանում և այլն), այնուամենայնիվ չեն ստուգում ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքների ծավալ, որը կարող է ամուր հիմք դառնալ մասնագիտական կարողությունների հետագա զարգացման համար:

Անդրադառնալով դիմորդի՝ հայոց լեզվի գիտելիքների ստուգման՝ ելույթ ունեցողները հավելեցին, որ դա նույնպես շատ կարևոր են համարում ոչ միայն ընդհանրապես, այլև հատկապես բանասիրական կրթություն ստանալու հավակնություն ունեցող դիմորդի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվի առնելով վերը նշված նկատառումները՝ այս պարագայում անխուսափելի անհրաժեշտություն համարել օտար լեզվի գրավոր և բանավոր քնությունների պահպանումը մասնագիտական բաժիններում, իսկ հայոց լեզվի գիտելիքների ստուգման համար հենվել ավագ դպրոցի արդյունքների վրա և այն դիտարկել գոնե որպես ստուգարք:

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան և գիտխորհրդի

նախագահ, Բ.Գ.Թ., դոց.՝

Գ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոց.՝

Մ. Դավալյան